

ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

7-8-րդ դդ. Հայ առաքելական եկեղեցին ծանր կացության մեջ էր գտնվում. մի կողմից քաղկեդոնականությունը, մյուս կողմից էլ սկիզբ առած զանազան աղանդներն ու հերձվածները ջլատում, պառակտում էին թե՛ հայ ժողովրդի և թե՛ հայ եկեղեցու միասնականությունը: Ահա այս պայմաններում է իր գործունեությունը ծավալել Հայ առաքելական եկեղեցու արժանահիշատակ եռվկապետներից մեկը՝ Հովհաննես Իմաստասեր Օձնեցին: Նա իր ամբողջ կաթողիկոսական առաքելությունը նվիրել է հենց այդ պառակտիչ տարրերի դեմ մղվող պայքարին: Բացի իր ծավալած աշխարհիկ գործունեությունից (ժողովներ, քարոզներ), նա միաժամանակ ստեղծել է գրական այնպիսի երկեր, որոնցով մարտահրավեր է նետել գործող աղանդներին ու հերձվածներին՝ մեկ առ մեկ քննելով ու հերքելով նրանց դրույթները: Այս առումով ուշագրավ են նրա «Ընդդեմ երևութականաց» և «Ընդդեմ Պատրիկեանց» ճառերը: Օձնեցին միաժամանակ զբաղվել է եկեղեցու բարեփոխումներով և եկեղեցական կանոնների համակարգման աշխատանքներով՝ գրելով «Ատենաբանութիւն», «Յաղագս կարգաց եկեղեցոյ», «Յաղագս կարգաց եկեղեցոյ Քրիստոսի», «Վասն մեծի ատուր միաշաբաթին», «Սակս զիշերային ժամու» աշխատությունները՝ լի իմաստասիրական մոտեցումներով ու ընդհանրացումներով:

Այնուհայտ է, որ Օձնեցին իր ամբողջ գրական գործունեությունը նվիրել է հայ եկեղեցուն և նրա հիմքերի ամրապնդմանը: Եվ բնական է, որ նա պետք է իր աշխատություններում օգտագործեր հենց կրոնաեկեղեցական տերմիններ և անվանումներ: Օձնեցու գործածած տերմինների մի մասը իր հեղինակություններն են, իսկ մի մասն էլ նախկինում արդեն եղած, բազմիցս գործածված բառեր են:

Չնայած տերմինների ուսումնասիրության և համակարգման աշխատանքները բավականին ուշ են սկսվել հայ իրականության մեջ, այնուամենայնիվ դրանք գործառվել են լեզվի վաղ զբաղվոր փուլերում, քանզի չի կարող խոսք լինել որևէ գիտության, մշակույթի ճյուղի մասին, եթե այն իր տերմինաբանությունը չունի: Իսկ մինչև Հովհաննես Օձնեցու հանդես գալն արդեն հայ մշակույթն ու գիտությունը որոշակի հիմնավոր ուղի էին անցել՝ շուրջ չորսդարյա պետականորեն ամրագրված քրիստոնեական հավատքով և երեքդարյա զիր ու գրականությամբ: Գրերի գյուտից հետո քարգանձվել էին Աստվածաշունչը, Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը և այլ արժեքավոր գործեր:

Հիմնադրվել և խորապես արմատավորվել էր հայ պատմագրությունը: Թարգմանական գրականության հետ պահանջ էր առաջացել ստեղծելու նոր բառեր, նոր տերմիններ, և արդեն V դարում հայ իրականության մեջ սկզբնավորվել էր հունարան հայերենը: Եվ այս բոլորը իրենց ներդրումն էին ունեցել հայերենի տերմինաբանության ձևավորման գործում: Բացի այդ, քրիստոնեության

պետականացումը և նրա հետ կապված շարականների, եկեղեցական ճառերի ստեղծումը ես որոշակի զեք են կատարել հայերեն տերմինների, մասնավորապես կրոնանկեղեցական տերմինների ստեղծման գործում: Այսպիսով՝ մինչև Հովհաննես Օձնեցու հանդես գալը հայերենն արդեն ունեցել է գիտական տերմինների որոշակի այաշար: Սակայն նա չի բավարարվել եղածով և իր երկներում գործածել է ոչ միայն իր նախորդների կողմից ավանդված տերմիններ, այլև ինքն է դրանք ստեղծել՝ տերմինային արժեք տալով հայերենում գործառուղ մի շարք բառերի:

Օձնեցու գործածած տերմինները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ կրոնանկեղեցական և իմաստասիրական (փիլիսոփայական): Բաժանումը պայմանական է, քանի որ Օձնեցու երկերը, ճիշտ է, գրված են աստվածաբանական, կրոնական թեմաներով, սակայն լի են իմաստասիրական տարրերով: Դա պայմանավորված է ոչ միայն Օձնեցու անհատական լեզվամտածողությամբ, յուրորինակ ոճով, այլև այն քանով, որ նրա ապրած ժամանակներում աստվածաբանությունն ու դավանաբանությունը փոխադարձաբար շղկապված էին փիլիսոփայությանը: Այդ է պատճառը, որ երբեմն ղծվար է որոշել Օձնեցու գործածած տերմինների դասակարգման սահմանը: Այնուամենայնիվ, փորձելով հաղթահարել ընտրության այդ բարդությունը՝ ստորև ներկայացնենք տերմինների այն շարքը, որ խմբավորել ենք «կրոնանկեղեցական բնույթի տերմիններ» անվան տակ: Այդ տերմիններն են՝ **անձն, գոբաղայ (գուրդայ), դէմ, երևութական, կաթողիկէ, հերձուածաղ, շունչ, որդեհայրութիւն** և այլն: Վերոհիշյալ տերմինները և մի քանի այլ տերմիններ ես (դրանց մասին կխոսվի ավելի ուշ) Օձնեցին գործածել է հիմնականում «Ընդդէմ երևութականաց» ճառում, որտեղ նա անխնա ձևով հերքում է բոլոր այն դրույթները, որոնք հայ իրականություն էին թափանցել Հուլիանոս Հալիկառնացու հետևորդների կողմից: Երևութականները ծայրահեղության էին հասցնում քրիստոնեության մեջ միաբնակության գաղափարը՝ Օձնեցին իր ճառում հերքում է այդ ուսմունքը՝ օգտագործելով բազմաթիվ կրոնանկեղեցական բնույթի բառեր ու տերմիններ:

Անձն բառը, որ իր սովորական իմաստով նշանակում է «մըքնութիւն, իմացական և բանատը էակի՝ դիմաւ որոշելոյ» (տես Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, Վենետիկ, 1838, այսուհետև՝ ՆՀԲ, էջ 192), Օձնեցու տերմինային համակարգում քարգմանվում է որպես «հոգի»/ՆՀԲ, ն.տ./: ՆՀԲ-ն բերում է քառի այս կարգի գործածության բազմաթիվ վկայություններ, որոնց թվում՝ նաև Օձնեցուց, Ալ. Ավգերյանից: Տերմինը բազմիցս գործածվում է «Ընդդէմ երևութականաց» ճառում: Ահա այդ գործածություններից մեկը՝ «... զի՝ արդ իշխես ասել զանբեւոյթ և զանձարմին **անձնն** Ռիդոյ մարմնաձևապէս անձնամալ յարգանդի կուսին, եթէ ոչ զկատարեալ մեր բնութիւն»/ԸԵ, Վեմ., 1953, էջ 68:

Ըստ Աճառյանի Հայերեն արձատական բառարանի (այսուհետև՝ Աճառյան)՝ այս բառը ծագում է հնդեվրոպական մախալեզվի *adgen* ձևից (I, 203):

Գոբաղայ /գուրդայ/ բառը որպես սովորական բառ նշանակում է «խմբաբանակ, սահման, խումբ»: Բառն ըստ Աճառյանի (I, 568) ասորական փոխառություն է: Իսկ ՆՀԲ-ի հեղինակները գտնում են, որ այն եբրայերեն «սահման» նշանակությամբ բառից է ծագում/ՆՀԲ, I, 565/: Որպես եկեղեցական տերմին՝ **գոբաղայ** նշանակում է «երեքական սաղմոսների ամբողջություն»

Մ. Պասյան, Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Երևան, 1998, էջ 101:

ՆՀԲ-ն այս տերմինի համար վկայություններ է բերում Փարպեցուց, Խոսրովիկ թարգմանչից, Օձնեցուց և ուրիշներից: Օձնեցին բառը գործածել է «Յաղագս կարգաց եկեղեցույ Քրիստոսի» ճառում՝ *գորաղայ*, իսկ «Ասկա զհչերային ժամու» ճառում՝ *գուրղայ* ձևով:

«Եւ եթ ընդէ՞ր եօթն *գորաղայիք* կանոնեալ է սաղմոսն Դ-արի» (ՅԿԵՔ 1833, 83):

«Արդ եօթն *գուրղայիք* կարգեալ ըստ եօթն դարու կենցաղոյս, և եօթն անգամ յաւորն օրհնի աստուած» (ԱԳԺ, 110):

Դէմ բառը որպէս սովորական բառ նշանակում է «դեմք, առաջ գլխոյ, երեսք» (ՆՀԲ, I, 612): Բառը պահլավական փոխառութիւն է /dem/ (Աճառյան, I, 660): Օձնեցին այն գործածել է տերմինային նշանակութեամբ, այն է՝ «ամձ»: ՆՀԲ-ն տերմինի գործածութեան համար վկայակոչում է նախ Դ-արիք Աճիաղի կողմից Դիոնիսիոսի թարգմանությունը, հետո՝ այլ հեղինակների, այդ թվում Օձնեցուն, Ավգերյանին և ուրիշների: Ահա բառի տերմինային գործածություններից մեկը «Ընդդէմ երևութականաց» ճառում՝ «... և զնոյն միաւորեալ ընդ իւրումն դիմի և բնութեան, մի դէմ և մի բնութիւն ասի և հանդերձ մարմնովն» (ԸԵ, 65):

Տերմինը համընդհանուր է նաև «Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառում. «... ըստ որում և միտք մարդոյ ոչ բաժանի յիւրմէ մարմնոյն, այլ մի դէմ, մի բնութիւն բովանդակ մարդն» (էջ 196):

Երևութական բառը կազմված է *երև* առանձին անգործածական արմատից, որը բնիկ հայկական ծագում ունի (Աճառյան, II, 49), *-ոյթ* և *-ական* ածանցներից: Որպէս սովորական բառ՝ նշանակում է՝ «առերևոյթ, երևելի, տեսանելի» (ՆՀԲ, I, 679): Բառը որպէս տերմին գործածել է միայն Օձնեցին՝ մեկ անգամ վերնագրում, երկու անգամ՝ բնագրում: Ավգերյանը որպէս այդ տերմինի հոմանիշ բերում է *ատաչօքեանք, ապականադանք, անկրականք* ձևերը (տես Յովհաննու Խմաստասիրի եւ կաթողիկոսի Հայոց Օձնեցույ Ծառ ընդդէմ երևութականաց, Վենետիկ, 1807, էջ 62, ծան. 1): Օձնեցին նկատի ունի նրանց, ովքեր ճշմարիտ մարդեղությունը առերևոյթ էին ընդունում: Ահա տերմինի գործածություններից մեկը՝ «... որպէս Պանդոքոսն ասէ, եթ իւրումն մնալով՝ *զերևութական* միայն զձևն զինքեամբ արկաւ, առ աչօք և ձևով եւթ ցուցեալ զմերն ի կուսէ...» (ԸԵ, 67):

Կաթողիկէ բառը ևս գործածված է որպէս տերմին: Այն հունական փոխառութիւն է (Աճառյան, II, 482) և նշանակում է «ընդհանուր, տիեզերական, բոլորին վերաբերող» (ՆՀԲ, I, 1032): ՆՀԲ-ն բերում է տերմինի գործածութեան հին և նոր վկայություններ. «Ապա թէ ի շարաշար արմատոց անտի ոչ ես շարագոյն ընծիւղեալ շառաւիղ, խոստովանեսցիս ընդ մեզ, մտնամանդ թէ ընդ հանրական *կաթողիկէ* եկեղեցույ զմի և զնոյն Քրիստոս աստուած միանգամայն և մարդ» (ԸԵ, 74):

Շանչ բնածայնական բառը, որ կազմված է շ բաղաձայնից *և չ* ածանցիչներով (Աճառյան, III, 535) և նշանակում է «ներքին օդ կամ հողմ թրց կենդանույ» (ՆՀԲ, II, 490), ունի նաև տերմինային արժեք՝ «ուգի» իմաստով: ՆՀԲ-ն տերմինի գործածութեան համար վկայակոչում է Օձնեցուն և՛ նախորդած, և՛ հաջորդած հեղինակների: Ահա բառի տերմինային գործածություններից մեկը՝ Օձնեցու կողմից. «Նոյնպէս և ըստ շնչոյն երկեաւ տատանսեցաւ, տրտմեցաւ. «Տրտում է աստ *շանչ* իմ մինչև ի մահ» (ԸԵ, 88):

Որպես կրոնաեկեղեցական տերմին Օձնեցին գործածել է *որդեհայություն* բառը, որը կազմված է *որդի* հնդեվրոպական ծագում ունեցող *portio* բառից (Աճառյան, III, 576) և *հայր*՝ հնդեվրոպական ծագումով (Աճառյան, III, 31) բառից՝ բաղադրված – *աթին* ածանցով: Տերմինը արտահայտում է սաբեյան խառնակ և մոլորյալ տեսությունը՝ որդին հոր հետ մի անձ համարելը (ՆՀԲ, II, 529): ՆՀԲ–ն քերտում է նաև բառի այս կարգի կիրառության ավելի վաղ օրինակներ (IV դ. հայրապետ Աթանասի ճառերը, Կյուրեղ երուսաղեմացուն):

«Որ ետես զիս՝ ետես ին»։ Եթե գտեսանելս զայս՝ առ բնութեանն տեսութիւն գորունի Որդի զՀօր, ոչ առաջնորդեսցես մտացն աչաց, ոչ միայն թե *որդեհայություն* ի ներքաածեալ մուծանես, այլ և մարմին ևս Հօր շնորհեսցես՝ որպէս և Որդւոյ» (ԸԵ, 77):

Տերմինների մյուս խումբը անվանել ենք իմաստասիրական կամ փիլիսոփայական տերմիններ: Ինչպես արդեն նշվել է, Օձնեցու երկերը գրված են ոչ միայն հայոց եկեղեցու նկատմամբ ունեցած խոր նվիրվածությամբ և հավատքով, այլև իմաստասիրական յուրահատուկ մտնեցմամբ: Հայտնի է, որ Հովհաննես Օձնեցին նշանակալից դեր է կատարել հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Հայոց իմաստասեր կաթողիկոսը, որ իր փիլիսոփայական հայացքներով հակված է եղել Արիստոտելի աշխարհընկալմանը, գոյի մեկնաբանման հարցում առաջնությունը տվել է գաղափարից դեպի իրն ընթացող մանապարհին՝ Եվ Օձնեցու երկերի ոճական մի շարք առանձնահատկություններ գլխավորապես պայմանավորված են նրա յուրօրինակ աշխարհընկալումով և իմաստասիրական հայացքներով, ինչպես նաև նրա՝ հումաբան հայերենով ստեղծագործելու փաստով: Եվ ինչպես պրոֆ. Վ. Համբարձումյանն է նշում Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանության առաջաբանում, ոճական այդ բազմազանությամբ է պայմանավորված այն, որ Օձնեցու երկերն ըստ արժանվույն չեն գնահատվել և հայ ընթերցողին հասու չեն եղել մինչև հիմա: Քանզի Օձնեցի կարդալու և ճիշտ հասկանալու համար գիտելիքների զգալի պաշար և խոր աշխարհընկալում է պահանջվում ընթերցողից: Եվ այս առումով ընթերցողը խորապես պարտական է Օձնեցու երկերի թարգմանչին՝ Վ. Համբարձումյանին, որ ամենայն ճշգրտությամբ ու գիտական բարեխղճությամբ է թարգմանել մեծ տանձողի երկերը՝ հավատարիմ մնալով հեղինակի աշխարհայացքին և ստեղծագործական նպատակադրվածությանը: Թարգմանությանը կցված ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու և հասկանալու Օձնեցու երկերում գործածված հատկապես իմաստասիրական բնույթի տերմինների նշանակությունները: Այս տերմիններն էլ հենց լրացնում, ամրոգացնում են Օձնեցու երկերի տերմինաբանական համակարգը: Դրանք են՝ *անայայություն*, *անպարհմանայի*, *բաղկանալ*, *բնութին*, *երկախումբ*, *հերձուածոզ*, *միաուրութին*, *տնօրինություն*, *ի մէնջից* և այլն:

Անայայություն բառը, որ կազմված է հնդեվրոպական ծագում ունեցող *alyo* մկ (հմտ.՝ Աճառյան, II, 168) կրկնությամբ, *ան-* և *-ություն* ածանցների միջոցով, սովորական իմաստով նշանակում է «անփոփոխություն», իսկ որպես իմաստասիրական տերմին՝ նշանակում է «անփոխարինելիություն»: Այս իմաստով բառը գործածվել է նաև Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանց» երկում

2 Տես Հովհաննես Օձնեցի, Սրկեր, զբաբայից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վազգեն Համբարձումյանի, Սրբան, 1999, էջ 12:

(հմտ.՝ հունարեն *αναπλαωρεω*, լատիներեն *Immutabilites* (ՆՀԲ, I, 106): Վկայություն կա նաև XI դ. պատմիչ Ասողիկից: Ահա տերմինի գործածություններից մեկը «Ընդդեմ երևութականաց» երկուն՝ «Ոչ մի է միութենէն զերկաքանչխոցն ուրանամ զկատարելութեան զմին հրաժարեմ ասել կատարելութիւն միութիւն յանայալլութեան, և **անաբաղադրիւն** ի միութեան» (էջ 65):

Անպարհիմանալի բառի սովորական իմաստն է «անբովանդակելի», իսկ որպէս տերմին նշանակում է «ամիմանալի, ամբողջովին անիմանալի» (ՆՀԲ, I, 229): Օձնեցոյ առաջ տերմինն օգտագործել է նրա ուսուցիչը՝ Թեոդորոս Քոթենավորը, իսկ հետագայում՝ ուրիշներ (հմտ.՝ Սկ. Ավգերյան, 1807, էջ 16, ծան. I, հուն. *αλερινηροσ*): Բառը կազմված է *ան-*, *-պար-* նախածանցներից և *իմանալ* բայից: «Անաստիկ ըստ անճառելի և **անպարհիմանալի** խառնմանն և միաւորութեան համարձակիմք ասել մի բնութիւն (ԸԵ, 65):

Քաղկանդ բառն իր սովորական իմաստով նշանակում է «զօղիչ, բաղադրիչ» (ՆՀԲ, I, 428): Բառը կազմված է *քաղ-* հունարան ծագումով ածանցից, որի նախնական իմաստն էր «կից, հար» և *կալանդալ* շտուկաբանված բառից (Աճառյան, I, 395): Ըստ Աճառյանի՝ *քաղ-*ը եբրայերեն *bal* բառից է: Որպէս տերմին **քաղկանդալ** նշանակում է «հաստատվել, կայանալ»: Օձնեցին տերմինն օգտագործում է ավելի լայն՝ «գոյանալ, առաջ գալ» իմաստով: Այս իմաստով տերմինն օգտագործել են նաև Դավիթ Անհաղթը, Անանիա Եկեղեցականը: «Քանզի ապականութիւն ներլինելութեանն ներհականայ և ներհակքն որ կարեն համանգամայն ի միոսն և նոյն ժամանակի **քաղկանդալ**, իսկ քաղց և ծարաւ և աշխատութիւն և տրտմութիւն և հոգք և երկիւղք և ցաւունմն՝ ևս և անզիտութիւն և որ սոցին նմանք համանգամայն ընդ ներլինելութեանն բանի առեալ լինի մարդուս» (ԸԵ, 82-83):

Բնութիւն (*natura*) բառը, որ կազմված է *բուն* պաիլավական «փիմ, արմատ, ծագում, բուն» իմաստն ունեցող արմատից (Աճառյան, I, 413), որպէս սովորական բառ նշանակում է «էութիւն, իսկութիւն, գոյացութիւն», իսկ որպէս տերմին՝ «անձ, ենթակայություն» (ՆՀԲ, I, 499): ՆՀԲ-ն այս տերմինի կիրառության համար վկայակոչում է նախ Օձնեցուն հաջորդող հեղինակների, այնուհետև Օձնեցուն, Ներսէս Ընորհալուն և ուրիշների: «Իսկ ի զերազանց և ի սքանչելի միաւորութենէն ոչ ինչ է արզել միութեան՝ զամենայնսն խոստովանել ի Քրիստոս մի ղէմ, մի անձն, և մի նորա **բնութիւն** (ԸԵ, 64):

Տերմինը բազմիցս գործածվում է Օձնեցու գործերում, մասնավորապէս «Ընդդեմ երևութականաց» ճառում:

Երկախաւմք բառը կազմված է *երկա* բնիկ հայերեն *ծառ - ծառու* (Աճառյան, II, 66) ձևից և *խաւմք* «հավաքված բազմություն» իմաստով շտուկաբանված արմատից (Աճառյան, II, 419): Օձնեցին բառը գործածել է որպէս տերմին՝ «երկուսը միասին» իմաստով, թեև այդ իմաստով բառն առաջինը գործածել է Թեոդորոս Քոթենավորը՝ «Ճառ ի սուրբ խաչն» ճառում (ՆՀԲ, I, 678): «Չսույն և երանելին Յոդիոս ասէ Հոովմայ հայրապետ. «Որ ասէ զմարմինն առ անեղն աստուած միաւորութեամբ աստուածային և երկրպագեալ, ևս **զերկախաւմքն** իբրև մի անանուելի աստուած, երանեալ եղիցի» (ԸԵ, 65):

Հերձուածող բառը սովորական իմաստով նշանակում է «ճեղքուած, ճեղք, ձերպ», ծագում է հնագոյն *խեր, խեղդ* ձևից (Աճառյան, III, 87-88): Որպէս

տերմին ՆՀԲ-ն քերում է բազմաթիվ վկայություններ, բայց ոչ Օձնեցուց: «Այս են երջանիկ հարանցն աստուածաբանական դաւանութիւնքն. որովք բանիվ դու **հերձուածող** առասես զնոսա, և ոչ զանգիտես և զարհուրիս» զթունալից որպէս զօձի զլեզուդ քո շարծիլ ընդդէմ նոցա, որք արտանեակք և սպասաւորք եղեն Բանին աստուծոյ» (ԸԵ, 78):

Միանձնականութիւն բառը կազմված է մի հնդեվրոպական ծագումով բառից (Աճառյան, III, 316), *անձն* արմատից՝ *ական*, *-աթխն* ածանցների միջոցով: Որպէս սովորական բառ նշանակում է «ունօղ զմի զանձն կան զանձնաւորութիւն՝ հակադրեալ երեքանձնական մի տերութեան» (ՆՀԲ, II, 270): Բառը տերմինային նշանակութեամբ գործածել է միայն Օձնեցին՝ «միասնական հոգի, միահոգիություն» իմաստով (ՆՀԲ, Ա.տ., հմտ.՝ Ավգերյան, էջ 13, ծ. 2, էջ 14-15, ծան. 2):

«Ապա ուրեմն մի բնութիւն և մի դէմ Քրիստոսի, եթէ պարտք համառօտագոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ **միանձնականութեան** զի այս զերկոսին ի միասին գրեթէ զրկեսցէ, զաստուած ի մարդն լինելոյ, և զմարդն յաստուածանալոյ...» (ԸԵ, 65):

Միատրութիւն բառը, որ դարձյալ *մի* արմատից է կազմված, նշանակում է «միութիւն, միասնութիւն» (ՆՀԲ, II, 273): Օձնեցին, հետևելով իր մի քանի նախորդներին (Կյուրեղ Աղեքսանդրացի և ուրիշներ), բառը գործածել է որպէս տերմին՝ «միանալը, միավորելը, անշփոթ խառնում» իմաստով: «Առ երկոսին հաւասարապէս ունի երանութեան բան, երկախումբ խոստովանեալ ըստ բնութեանց, և մի ըստ **միատրութեան**» (ԸԵ, 65):

Տնօրհնութիւն բառը, որ կազմված է տուն՝ հնդեվրոպական *dom*, (Աճառյան, IV, 426) և *օրէն* պահպակական *օւոճեւ* (Աճառյան, IV, 618) արմատներից, սովորական իմաստով նշանակում է «ոնտեսություն, հոգաբարձություն»:

Որպէս տերմին՝ նշանակում է «խորհուրդ մարդեղության, Աստծո որդու իջնելը և մարդանալը» (ՆՀԲ, II, 886): Վկայություններ կան Օձնեցուն նախորդած հեղինակներից: «Ոչ ըստ ինքեան ասի մի բնութիւն և առանձնաւորութիւն, քան զի զայս ի հօրէ իսկ անժամանակարար յինքեան բերէր Բանն աստուած. այլ ըստ անճառ **անօրէնութեանն** ի կոսիսն» (ԸԵ, 69):

Օձնեցին որպէս տերմին օգտագործել է նաև հարադրություններ: **Ի մենջից** հարադրությունը՝ ձևավորված ի նախորդով և մէջ բառի բացառական հալովով՝ *-ից* վերջավորությամբ (ի մենջք), Օձնեցին օգտագործել է որպէս տերմին՝ «որոնք մեզանից են, մերայիններ» իմաստով: Այս տերմինը օգտագործել է միայն Օձնեցին՝ «ես կամ գորս ի մենջից աստի հոգին սուրբ զարթոյց՝ լինել զկնի առաջնոյ լուսաւորիչք զերկոսին զնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ և զՍաշողոց, և զամենեսին զրնտրեալսն զարբանեակս նոցուն և զգործակիցս զեզնակ և զայսն» (ԸԵ, 81):

Այսպիսով՝ Հովհաննէս Իմաստասեր Օձնեցու երկերը հագեցած են ոչ միայն նորակազմ ու սովորական գործածություն ունեցող բառերով, այլև բազմաթիվ տերմիններով, որոնք ունեն կրոնանկեղեցական և փիլիսոփայական բնույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, I-IV, Երևան, 1971-1979:
 Ակ. Ազեղեան, Յովհաննու Իմաստասիրի և կաթողիկոսի Հայոց Օձնեցոյ ճառ ընդդէմ երևութականաց. Վեներիկ, 1807:
 Գիրք բոլոց, Թիֆլիս, 1901, էջ 73-493:
 Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դատանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, «Արարատ» (ամսագիր), 1896, ապրիլ:
 Հովհաննես Օձնեցի, Երկեր, Գրաքարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրութիւնները՝ Վազգեն Համբարձումյանի, Երևան, 1999:
 Վ. Համբարձումյան, Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, «Էջմիածին» (ամսագիր), 1997, ապրիլ-մայիս:
 Յովհան Օձնեցի, Մատենագրութիւնք, Վեներիկ, 1953 (Ընդդէմ երևութականաց):
 Յովհան Օձնեցի, Մատենագրութիւնք, Վեներիկ, 1833:
 Գ. Անտիքեան, Խ. Միրւելեան, Մ. Ազեղեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վեներիկ, Խ I-II, 1836-1837:
 Մ. Պապյան, Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Երևան, 1998:

B. A. Nersisyan

Употребление церковно-религиозных и философских терминов в трудах Ованеса Одзнеця

Ованес Одзнеця в своих трудах употребил ряд терминов, которые имеют церковно-религиозный и философский оттенок. Употребление некоторых терминов принадлежит только Одзнеця, а остальные термины встречаются и у его предшественников, и у последующих авторов.

Церковно-религиозные термины: *անձն, գորաղայ (գուրղայ), դէմ, երևութական, կաթողիկէ, շուն, որդեհայրութիւն:*

Философские термины: *անայայլութիւն, անպարիմանալի, քաղկանալ, բնութիւն, երկախումք, հերձուածոյ, միանձնականութիւն, միաորութիւն, տնօրինութիւն, ի մէջից:*

V. A. Nersisyan

The Usage of Religious-Church Terms in Hovhannes Odznetsi's Works

Hovhannes Odznetsi have summary used a number of terms of religious-church and philosophical character. The usage of some terms belong only to him though other terms have also been used by earlier authors as well as by later ones.

Religious terms are: *անձն, գորաղայ (գուրղայ), դէմ, երևութական, կաթողիկէ, շուն, որդեհայրութիւն:*

Philosophical terms are: *անայայլութիւն, անպարիմանալի, քաղկանալ, բնութիւն, երկախումք, հերձուածոյ, միանձնականութիւն, միաորութիւն, տնօրինութիւն, ի մէջից:*